ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «12» հունիսի 2019թ.

2019թ-ի հունիսի 12-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպության (այսուհետ նաև «ԱՏՁՄ» ՀԿ) գրասենյակում տեղի ունեցավ ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Սահակյան	«ԱՏՁՄ» ՀԿ իրավաբան՝ նախագահ
Հ. Շահումյան	ՏՏՀՀ-2019 ծրագրերի համակարգող
Ա. Բաղդասարյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության, պայմանագրերի և տնտեսական գործի կազմակերպման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Մ. Զաքարյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, տեղեկատվական, բարձր տեխնոլոգիաների և թվայնացման վարչության գլխավոր մասնագետ:
Հ. Գուլաբյան	«ԱՏՁՄ» ՀԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղար

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Սահակյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:

2. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Հ. Գուլաբյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած **«ԻՆՈ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Հաստատել ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«ԻՆՈ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**՝ բավարար"

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԱՏՁՄ-ՏՏՀՀ-2019-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«ԻՆՈ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Շահումյան _____

Ա. Բաղդասարյան _____

Մ. Զաքարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գուլաբյան _____